

ՈՃԻ ՊԵՏԱԿԵՐԸՆԻՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՆԱՍՏԵՂԺՈՒԹԵԸՆ ՄԷՀ

«Երան, ով կարողանայ իւր զգացմունքը դնել մի առարկայի մէջ, այնպէս որ այդ առարկան (object) ստիպէր ինձ նոյն զգացումն ունենալ, հետեապէս կենդանի կերպով իմ վրայ ներգործէր—նրան ևս կը կոչեմ պոէտ, ստեղծագործող»—ասում է Շիլերը, որի նամակները «Գեղարուեստի մասին» մինչեւ այսօր էլ կլասսիկ են համարւում գրական աշխարհում *);

Բաւական չէ միայն իւր մէջ զգացմունք, գաղափար ունենալ, այդ հօ ամեն մարդ ունի առանց բացառութեան, այլ և հարկաւոր է արտայատել սրտինն ու մտքինը, և ահա այդ արտայատման որակից է կախուած նաև բանաստեղծի որակը:

Շիլերի մտքով բանաստեղծ է նա, ով իւր գաղափարներն ու զգացմունքները թղթին կամ մի այլ առարկայի յանձնելիս, նրանց մէջ է գնում իւր ներքին աշխարհի ամբողջ ոյժն ու թափը, այդ մոմենտի բոլոր զօրութիւնը, էներգիան, այնպէս որ երբ մի մարդ մօտենայ այդ առարկային, դիտէ նրան կամ կարգայ, նրա մէջ բարձրանան նոյն այն զգացմունքներն ու մըտքերը, որոնք վրդովել, ալեկոծել են բանաստեղծի սիրտն ու միտքը: Ուրիշ խօսքով բանաստեղծ է նա, ով կարողանում է իւր ստեղծագործութեան մէջ դնել իւր ներքին աշխարհը կենդանի, առաւորիչ ու կոնկրէտ կերպով:

Ասացինք, որ արտայայտութեան եղանակից է կախուած բանաստեղծի որակը: Արտայայտութիւնը, ինչպէս յայտնի է, ներքինի համեմատաբար աւելի թոյլ պատկերն է, հետեապէս և մարդու ներքին հոգեկան ուժից է կախուած բանաստեղծի որպիսութիւնը:

*.) Aesthetik. Moriz Carriere, I Theil, որից պատկերաւութիւնը գրելիս մասամբ օգտուել եմ:

Քանի բանաստեղծի հոգին ընդունակ է արտաքին աշխարհի մարմնաւոր շօշափելի առարկաներին իդէալական ծեւ ու զգեստ հազցնել եւ ընդհակառակը իւր գաղափարներին եւ իդէաներին շօշափելի, կոնկրէտ տարագիմէջ դնել—այնքան նա արժանի է ստեղծագործող, պոէտ կոչուելու:

Բացարձակ ստեղծագործութիւն չը կայ. այդ գաղափարը յարաբերական է: Մենք բոլորս ամենայն օր անթիւ տպաւորութիւններ ենք ստանում արտաքին աշխարհից, մեր սիրուն ու սիսքը բազմաթիւ նորանոր պատկերներ են ստանում, բայց շատ քչերի մէջ այդ արտաքին աշխարհը իւր բոլոր բազմազանութեամբ մի կայուն հետք է թողնում: Շատ քչերն են կարողանում զեկավարել իրանց տպաւորութիւններն ու մի ամբողջութիւն ստեղծել: Ուրիշ խօսքով՝ շատ քչերի երեակայութիւնը (phantasie) այնքան վառ ու զօրեղ է, որ կարողանայ միս և արիւն տալ ստացած տպաւորութիւններին և թոյլ չը տայ, որ դրանք անհետ կորչեն:

Երեակայութեան պակասութիւնն ու թուլութիւնը առաջանում է անկենդան, չոր ու անդրյու երկեր. որտեղ բացակայում է երեակայութիւնը, այնտեղ չի կարելի գտնել ստեղծագործութիւն, որովհետև երեակայութիւնն է միայն, որ հնարաւոր է դարձնում նոր բանի առաջացումը. նա է, որ հնարաւոր է դարձնում հինը նոր ձեռով, կամ հնի հիման վրայ բոլորովին նոր բան արտայայտելը:

Հստ Շոպենհաուէրի՝ «Երեակայութեամբ օժտուած մարդիկ այնպէս են յարաբերում երեակայութիւնից, զուրկ մարդկանց, ինչպէս ազատաշարժ, նոյնիսկ թեաւոր կենդանիները ժայռերին կապա խեցիներին»: Ֆառուսի երկրորդ մասում Գեօթէն ամենաբարձր մրցանակը դարձեալ երեակայութեանն է տալիս.

Welcher Unsterblichen
Soll der höchste Preis sein?
Mit Niemand streit' ich,
Aber ich geb' ihn
Der ewig beweglichen,
Ymmer niuen
Seltsamen Tochter Yovis,
Seinem Schoskinde
Der Phantasie *).

* Ո՞ր անմահին պէտք է տալ ամենաբարձր մրցանակը. ես չեմ վիճի ոչ որի հետ. բայց ես տալիս եմ դա Երաժագդի յարաշարժ, միշտ նոր, չնաշխարհիկ ու սիրելի աղջկան՝ երեակայութեանը:

Երեակայութիւնն ըստինքեան մի բան չի կարող անել. նա մի տեսակ իշխողի, կարգագրողի դեր է կատարում մեր տըպաւորութիւնների նկատմամբ: Նա արտաքին աշխարհից ստացած մեր պատկերները դառնամ, մշակում է և դրանց նմանուելով՝ շատ անգամ նոր պատկերներ է ստեղծում, որոնք երբեմն բոլորովին ինքնուրոյն են գուրս դալիս:

Երեակայութիւնը հանդէս է գալիս միայն այն ժամանակ, երբ մարդու ըմբռնող ոյժերը արտաքին աշխարհից տպաւորութիւններ են ստացել, և այդ տպաւորութիւնները յետոյ նա աւելի զարդացնում է: Այսեղից հետեւում է ուրեմն, որ երեակայութեամբ օժտուած մարդը քանի շատ դիտած լինի աշխարհը, շրջապատող իրեն ու առարկաները, այնքան իրական, վաստակաւոր ու բեղուն կարող է լինել նրա արդիւնքը, հակառակ դէպքում լոկ երեակայութեամբ օժտուած ու աշխարհին մնանելեակ, արտաքին աշխարհից սակաւ տպաւորութիւն ստացած մարդիկ ցնորսական երկերի ու անմիտ, ֆանտաստիկ, ոչ իրական գործերի հեղինակ կարող են լինել: Որովհետեւ երեակայութեան ծամիչը, կոնտրոլերը դարձեալ իրականութեան մէջ պիտի որոնել, ամեն բանի սաղմը, հետեազէս երեակայութեամբ ստեղծած ամենայն հնարաւոր պատկերների հիմքը իրական աշխարհի մէջ է որոնելու: Բարձր ստեղծագործութիւնն արդիւնք է վերասլաց, ազատ երեակայութեան և ծամարիտ, անսուտ իրականութեամն:

Արտաքին աշխարհից ստացած բազմաթիւ տպաւորութիւնները մնում են մեր ուղեղի մէջ, դրանց վրայ աւելանում են նորերը, հներից շատերը մոռացնում են, մի քանիսները վերատագրուում, միւսները մնում չը վերարտագրուած և այդպէս շարունակաւար իրար փոխարինում, լրացնում են: Այդպիսով մեր ուղեղը մտապատկերների մի կալէջոսկոպ է, որտեղ արտաքին աշխարհից ստացած ազդումները՝ համապատասխան դրսի շրջապատին՝ անընդհատ շարժման մէջ են:

Սակայն երբէք չի կարելի ստել, թէ արտաքին աշխարհից ստացած որևէ մի մտապատկեր իսպառ անհետանում է մէկի ուղեղից, ուրիշ բան է, որ նա երկար ժամանակ անզիտակից դրութեան մէջ է մնում, կամ երբեմն և մինչև մարդու մահը չի վերարտադրուում, բայց ընդհանրապէս բոլոր հին մտապատկերները զուգորդութեան պէս-պէս օրէնքների հիման վրայ կարող են վերարտադրուել: Եւ այն գորութիւնը, որ անզիտակից դրութիւնից գիտակցական դրսութեան է բերում մտապատկերը—իշողութիւնն է: Յիշողութիւնը կարեոր դեր է կատարում արտայայտութիւնը պատկերաւոր դարձնելու գործում: Եթէ մի բա-

նաստեղծ գործ է ածում այնպիսի մի ոճ, որ լի է իրականից վերցրած ամեն տեսակ պատկերներով, բաղդատութիւններով, այդ ապացոյց է բանաստեղծի նախ՝ հոգեկան ըմբռնող, տպաւորիչ զօրութեան, զուգորդող—ստեղծագործող երևակայութեան և երկրորդ՝ անպայման կերպով նրա ունեցած յիշողութեան, որովհետև առանց յիշողութեան՝ երեմն ըմբռնուած բաղմաթիւ մտապատկերները կարող են բոլորովին յետ մղուել ու չը վերաբարձրուել:

Այսպիսով ուրեմն արտայտութեան կամ ոճի պատկերաւորութիւնը կախուած է արտաքին աշխարհի նկատմամբ մարդու խոր ու ճիշտ ըմբռնումից, վառ և ստեղծագործող երևակայութիւնից և օժանդակ յիշողութիւնից:

Նայելով բանաստեղծի արտայայտութեան, նրա ոճի յատկութիւններին, կարելի է մօտաւորապէս գաղափար կտղմել նրա ներքին, հոգեկան աշխարհի արգասաւորող ոյժի և զօրութեան, թափի մասին:

Կան գրողներ, որոնք ընդունակ են արտաքին աշխարհն ամենայն մանրամասնութեամբ իրանց հոգու մէջ ընդունելու և այնտեղից աւելի զառուած, աւելի մշակուած լոյս ընծայելու—և որոնք սակայն չեն կարողանում իրանց ստացած բաղմազան տպաւորութիւններն ու պատկերներն անբողջացնել, մի գեղարուեստական միւսւթիւն առաջացնել. նրանց ստեղծագործութիւնները մնում են հատուածական:

Քանի գեռ բանաստեղծի ներքին ստեղծագործող ոյժը մատղաշ է, քանի նրա հոգեկան կարողութիւնները գեռ որոշ կայունութեան չեն հասել, քանի նրա ծնող, արտագրող աշխարհը մի որոշ գոյնով չի ներկաւել, մի հաստատուն, աներկրայ ու անյեղի գրոշմով չի ամրապնդուել, ուրիշ խօսքով քանի գեռ բանաստեղծը մտքով ու հոգով հասուն չէ, այնքան նրա երևակայութիւնն ուղղուած կը լինի անորոշ, տարտամ առարկաների, այնքան նրա ցանկութիւնները ոռմանտիկական, իրական հողից զուրկ, այնքան նրա սրոչիան մշուշապատ ու մութ, այնքան նրա ներքին աշխարհից դուրս եկած արդիւնքները դրա համեմատ հատուածական կը լինեն, կտորներ, որոնց մէջ պակասում է ամբողջացնող ոյժը—երևակայութեան բարձր աստիճաննը, կտորներ, որոնցից իւրաքանչիւրը սակայն առանձին վերցրած հարազատ բանաստեղծութեան իսկական նմուշներ կարող են լինել:

Երբ մարդ ունի արտաքինն ըմբռնելու և դա իր ստեղծագործող ներքին աշխարհում զտելով ու իր միացնող, յօդիչ երեակայութեան չնորհիւ ամբողջացնելով՝ տպաւորիչ ու նկարօբէն արտայայտելու ունակութիւնը, նա արդէն բանաստեղծ է, և նրա ոճն անկասկած պատկերաւոր է:

Պատկերաւոր ոճի արտայայտութիւնը խիստ բազմազան է: Պատկերաւորութեան հիմքն է բաղբատութիւնը իր երկու կողմերով՝ նմանութիւն կամ համեմատութիւն և հակադրութիւն: Բազգատութիւնն է համարեա այն հիմնաքարը, որից ծագում և զարգանում են միւս բոլոր պատկերները: Այլարանութիւն, փոխաբերութիւն, զիմումներ՝ պատկերաւոր ոճի էական տարրերն են: Այդպիսի ոճի առանձնայատկութիւններից է նաև ժակդիրներ գործ ածելը, որը բնականաբար հետեւում է պատկերաւորութեան զաղափարից: Օրինակ՝ լուսափթիթ ամպ, ատրուշան աչք, հրդեհ սիրտ և այլն, Մակդիրը կիսատ պատկեր է լինում ընդհանրապէս, որ բանաստեղծի երեակայութեան մէջ իհարկէ ամբողջ է լինում: Այսուհետև ընթերցողին է մնում իր երեակայութեամբ լրացնել պոէտի թերի պատկերը:

Որեէ բանաստեղծի ոճն ուսումնասիրելիս, մանաւանդ երբ ի նկատի ունենք յատկապէս պատկերաւորութիւնը, խիստ կարևոր է զանազանել գոնէ մօտաւորապէս, թէ արդեօք այդ բանաստեղծի գործածած պատկերներն իր իսկ հոգուց են բրդինում, ինքնաստիպ են, թէ ուրիշից առած, արդէն որոշ հասարակութեան կամ մարդկանց շրջանում սովորական դարձած գարձուածքներ: Շատ անգայ մենք կարդում ենք որևէ ոստանաւոր, ուրախանում, հրձւում ենք նրա տպաւորիչ, գունիչ և երեակայալից պատկերների համար, գովում ենք գրողի ստեղծագործական տաղանդը, բայց գուրս է գալիս, որ նրա ոստանաւորի մէջ եղած գովասանների արժանի բոլոր տարրերը փոխառութիւն են... Այդպիսի բան շատ է պատահում, եւ այն էլ պէտքէ ասել, որ շատ դժուար է ճտել, որ պատկերներն են հեղինակինը, որը ուրիշից վերցրած: Դա արդէն ուսումնասիրողի քննողական հոտառութիւնից և բանաստեղծի երկերի ամբողջական տպաւորութիւնից է կախուած:

Մեր անցեալ գրականութեան մէջ առայժմ մեզ յայտնի է միայն մի գրող, որ ամենայն իրաւամբ արժանի է ստեղծագործող անուան. դա մեր հայ ժողովրդին լաւ ծանօթ Գրիգոր Նարեկացին է: Այդ հասարակ վանականը օժտուած է եղել այնպիսի գտա երեակայութեամբ, նրա հոգեկան ըմբռնող ուժերն այնպէս զարգացած, նուրբ ու զիւրազգաց են եղել, որ իրանց թողած արդիւնքով մինչև այժմ իւրաքանչիւր ուշադիր ընթեր-

ցողի ապշեցնուռ են: Նարեկացին գրելուց առաջ արդէն իր հոգու մէջ կոնկրէտ ձեռքով հանդերձաւորել պատկերաւորել էր դրսից ստացած իւրաքանչիւր տպաւորութիւն, ամեն մի ազգում: Նրա հոգեոր աչքին նրա երեակայութեան առաջ միշտ կենդանի, միշտ շարժուն են եղել այն սարսափներն ու արհաւիրքները, որ ֆանատիկ քրիստոնէի անահման երեակայութեամբ պատրաստուած են մեղաւորների համար, և այն հրճուանքն ու ցնծութիւնը, որոնցով ներդաշնակութեան ձգտող ու սոսկալի անորոշութիւնից ազատուել աենչող խղճուկ մարդկութիւնը անցիշտակ ժամանակներից իրան փայտայել, հանգըստայրել է, որոնցով իւր մէջ եռ եկող ըմբոստ ողին առժամ մի լոեցրել է:

Դժբախտաբար Նարեկացին յօդիչ, զօրեղ երեակայութեան ու պատկերաւոր, զունեղ արտայայտութեան կողմից չ'ունեցաւ իւր արժանաւոր յաջորդը:

Սուսահայ բանաստեղծներն ընդհանրապէս վերցրած աչքի չեն ընկնում իրանց տպաւորիչ, նկարչական ոճով, նրանց երկերը մեծ մասամբ ազդում են մեր մտքի, ուղեղի վրայ, առանց ուժգին կերպով ազդելու նաև մեր սրտի, զգացմոնքի վրայ: Նրանք մեծ մասամբ գաղափարի քարոզիչներ են փարզապեսական-խրատական կամ երգիծաբանական ձեռվ: Մեր ոռւսահայոց բանաստեղծներից քչերն ունեն միջակ պատկերաւոր ոճ, շատ քչերի երեակայութիւնը հազրագիւտ դէպքերում թողնում է շրջապատող պրոզայիկ իրերն ու թեմաները և ստեղծագործողի արագաթուիչ թերով պահնում դէպի իդէալական, դէպի բանաստեղծական աշխարհը—դէպի հարազատ պոէզիան:

Ոճի պատկերաւորութեան կողմից աւելի առաջ են համեմատաբար թիւրբահայ բանաստեղծները:—Այդ երեսյթի հոգեբանական խոր արմատները պէտք է որսնել անշուշտ գլխաւորապէս անհատական առանձնայականութիւնների, ինչպէս նաև տեղաւորման, դիրքի ու այլ բարդ պայմանների մէջ:

Թիւրբահայերի մէջ ոտանաւոր զրողների ահազին բազմութեան ցած և սովորական մակերեսոյթից բարձրանում, վերանում են առանձնապէս Ալիշան, Անէմեան, Պէշիթաշլեան... և այլք՝ բոլորուելով իրար շուրջ և տեղ բաց անելով՝ պատկերաւորութեան մէջ իրանց բոլորին գերազանցող մի պատանու, որ ծնած օրից ի վեր «հիւղի հառաչ» է եղել, որի «հանճարը վհին մէջ գանդ մ'եղաւ, առանց մարդկութեան եթերին մէջ զիսաւոր մ'ըլլալու»—միով բանիւ՝ որի անունն է աղքատութեան շահատակ:—Պարզ է, որ մեր խօսքը Պ. Դուրեանի մասին

է*): Ոճի պատկերաւորութեան կողմից պատանի Դուրեանը
միշտ կը մնայ մեր բանաստեղծութեան մէջ իրու հետեւելու ար-
ժանի գեղեցիկ օբյենակ:

ԳԵՂԱՐԳԻ ԱԼԹՈՒՆԵԱՆ

*) Դուրեանի մասին տես «Մուրճի» № 3-ում տպուած «Հեծեանքների
երգիշը»: